

$$1. \text{ Հաշվել } \left| 5\frac{3}{7} - \left(2,5 + 1\frac{1}{3} \right) : \frac{1}{6} \right| :$$

$$\text{Պատ. } \frac{123}{7}$$

2. Վինի թուխը, Խոզուկը, Ճագարը և Իշուկը կերան մի տակաոռիկ մեղր: Ընդ որում Խոզուկը կերավ Վինի թուխի կերածի կեսի չափով, իսկ Ճագարը՝ Վինի թուխի չկերածի կեսի չափով: Իշուկը կերավ մեղրի տասներորդ մասը: Մեղրի n ր մասը հասավ Ճագարին:

$$\text{Պատ. } \frac{3}{10}$$

3. Գտնել զրոյից տարբեր թվանշաններով գրվող այն քառանիշ թվերը, որոնց առաջին երեք թվանշանների գումարը հավասար է 24, իսկ վերջին երեք թվանշանների գումարը՝ 16:

$$\text{Պատ. } 9781, 9871, 9961, 9691$$

4. Դասարանի բոլոր աշակերտների 20 %-ը և ևս 5 աշակերտ խաղում են շախմատ, իսկ $\frac{3}{7}$ մասը և ևս 8 աշակերտ՝ վոլեյբոլ: Քանի՞ աշակերտ է սովորում դասարանում, եթե դասարանի յուրաքանչյուր աշակերտ մասնակցում է այդ խաղերից միայն մեկին:

$$\text{Պատ. } 35$$

5. Խանութում կար 1,75 տ խնձոր և 1,1 տ տանձ: Օրական վաճառվում էր 125 կգ խնձոր՝ կիլոգրամը 250 դրամով, և 110 կգ տանձ՝ կիլոգրամը 300 դրամով: Նվազագույնը քանի՞ օրում խնձորի վաճառքից ստացված հասույթը /գումարը/ կգերազանցի տանձի վաճառքից ստացված հասույթին:

$$\text{Պատ. } 11$$

6. Շրջանագծի վրա վերցրել են 8 կետ, որոնցից երկուսը ներկել են կարմիր գույնով, երեքը՝ կապույտ գույնով, իսկ մյուս երեքը՝ ծիրանագույն: Գտնել այն եռանկյունների քանակը, որոնց գագաթները նշված կետերն են և, որոնց գագաթներից գոնե երկուսը ներկված են նույն գույնով:


$$\text{Պատ. } 38$$

7. Արամը գրեց 136 հատ սովորական կանոնավոր կոտորակ՝ $\frac{1}{2}, \frac{1}{3}, \frac{2}{3}, \frac{1}{4}, \frac{2}{4}, \frac{3}{4}, \frac{1}{5}, \frac{2}{5}, \frac{3}{5}, \frac{4}{5}, \dots$, որից հետո այն կոտորակները, որոնք փոքր են $\frac{1}{2}$ -ից, ներկեց կարմիր գույնով, իսկ մնացած կոտորակները՝ կապույտ գույնով: Ո՞ր գույնի կոտորակներն են շատ և որքանո՞վ:

$$\text{Պատ. } \text{Կապույտը 8-ով}$$

8. 11 սմ, 9 սմ, 7 սմ և 5 սմ կողմերով քառակուսիները դասավորված են այնպես, ինչպես ցույց է տրված նկարում: Պարզվել է, որ գորշագույն մասերի մակերեսների գումարը կրկնակի մեծ է սև մասերի մակերեսների գումարից: Գտնել սպիտակ մասերի մակերեսների գումարը:

$$\text{Պատ. } 42$$



1. Հաշվել՝ $\left| 6\frac{3}{7} - \left(3,5 + 1\frac{1}{3} \right) : \frac{1}{6} \right|$:

Պատ.՝ $\frac{158}{7}$

2. Վինի թուխը, Խոզուկը, Ճագարը և Իշուկը կերան մի տակաոռիկ մեղր: Ընդ որում Խոզուկը կերավ Վինի թուխի կերածի $\frac{1}{3}$ չափով, իսկ Ճագարը՝ Վինի թուխի չկերածի $\frac{1}{3}$ չափով: Իշուկը կերավ մեղրի $\frac{1}{3}$ մասը: Մեղրի ո՞ր մասը հասավ Ճագարին:

Պատ.՝ $\frac{2}{9}$

3. Գտնել այն քառանիշ թվերը, որոնց առաջին երեք թվանշանների արտադրյալը հավասար է 56, իսկ վերջին երեք թվանշանների արտադրյալը՝ 224:

Պատ.՝ 1784, 1874, 2478, 2748

4. Դասարանի աշակերտների 35 %-ը և ևս 2 աշակերտ խաղում են շախմատ, իսկ $\frac{2}{5}$ մասը և ևս 8 աշակերտ՝ վոլեյբոլ: Քանի՞ աշակերտ է սովորում դասարանում, եթե դասարանի յուրաքանչյուր աշակերտ մասնակցում է այդ խաղերից միայն մեկին:

Պատ.՝ 40

5. Խանութում կար 2,25 տ խնձոր և 1,2 տ տանձ: Օրական վաճառվում էր 125 կգ խնձոր՝ կիլոգրամը 250 դրամով, և 120 կգ տանձ՝ կիլոգրամը 300 դրամով: Նվազագույնը քանի՞ օրում խնձորի վաճառքից ստացված հասույթը /գումարը/ կգերազանցի տանձի վաճառքից ստացված հասույթին:

Պատ.՝ 12


6. Շրջանագծի վրա վերցրել են 7 կետ, որոնցից երկուսը ներկել են կարմիր գույնով, երկուսը՝ կապույտ գույնով, իսկ երեքը՝ ծիրանագույն: Գտնել այն եռանկյունների քանակը, որոնց գագաթները նշված կետերն են և, որոնց գագաթներից գոնե երկուսը ներկված են նույն գույնով:

Պատ.՝ 23

7. Արամը գրեց 120 հատ սովորական կանոնավոր կոտորակ՝ $\frac{1}{2}, \frac{1}{3}, \frac{2}{3}, \frac{1}{4}, \frac{2}{4}, \frac{3}{4}, \frac{1}{5}, \frac{2}{5}, \frac{3}{5}, \frac{4}{5}, \dots$, որից հետո այն կոտորակները, որոնք փոքր են $\frac{1}{2}$ -ից, ներկեց կարմիր գույնով, իսկ մնացած կոտորակները՝ կապույտ գույնով: Ո՞ր գույնի կոտորակներն են շատ և որքանո՞վ:

Պատ.՝ Կապույտը 8-ով

8. 12 սմ, 9 սմ, 8 սմ և 6 սմ կողմերով քառակուսիները դասավորված են այնպես, ինչպես ցույց է տրված նկարում: Պարզվել է, որ գորշագույն մասերի մակերեսների գումարը կրկնակի մեծ է սև մասերի մակերեսների գումարից: Գտնել սպիտակ մասերի մակերեսների գումարը:



Պատ.՝ 26